ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ք.Աշտարակ 2024թ. սեպտեմբերի 16-ին, N 385 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 113-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով, 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 2.2 կետի պահանջները՝ որոշում եմ.

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 113-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

16.09.2024

X

VERIFIED OCSP 16.09.2024 16:37:20 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ